Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար 1-ին դասարանի, թափուր տեղի համար 13 /տասներեք / դասաժամ, դասվար 3-րդ դասարանի, թափուր տեղի համար 16 /տասնվեց / դասաժամ, դասվար 4-րդ դասարանի, թափուր տեղի համար 17 /տասնյոթ /դասաժամ և երաժշտություն առարկայի թափուր տեղի համար 6 /վեց/ դասաժամ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը : Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում՝ (Ձև 1),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարության հրապարակման օրվանից 2024 թվականի մարտի 29-ից մինչև 2024 թվականի ապրիլի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի: Մրցույթը տեղի կունենա 2024թվականի ապրիլի 16- ին՝ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք բնակավայր Ջաջուռ փողոց 3 շենք 57: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)165774 հեռախոսահամարով: